ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳԻՐԸ

(Կ. Ա. Հարությունյանի 75-ամյակի առթիվ)

Լրացավ Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության պատմության լուսաբանման նվիրյալ տարեգիր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կլիմենտ Ամասիայի Հարությունյանի ծննդյան 75-ամյակը:

Կ. Հարությունյանը ծնվել է 1940 թ. մայիսի 1-ին Հայաստանի Կապան քաղաքում, շիկահողցի ծնողների ընտանիքում: 1947–1957 թթ. սովորել է Կապանի թիվ 2 միջնակարգ դպրոցում: Այդ տարիներին գրել է արձակ և չափածո ստեղծագործություններ, տպագրվել շրջանային «Պոնձի համար» թերթում և «Ղափան» գրական ալմանախում: Դպրոցն ավարտելուց հետո աշխատել է Կապանի մեքենատրակտորային կայանում, Կովկասյան շինմոնտաժային տրեստում որպես փականագործ, ապա ընդունվել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի մեքենայացման ֆակուլտետը: Այնուհետև 1961–1966 թթ. սովորել ու գերազանցությամբ ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետի պատմության բաժինը: Ուսանողական տարիներին թղթակցել է ինստիտուտի «Մանկավարժ» թերթին, բարձր կուրսերում ղեկավարել Հայոց պատմության ուսանողական գիտական ընկերության աշխատանքները, հանդես եկել «Մեծ եղեռնը», «Հայ կամավորական շարժումը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին»՝ այն ժամանակվա համար շատ համարձակ զեկուցումներով: 1966 թ. ապրիլի 25–28-ին մասնակցել է Բաթումում կայացած անդրկովկասյան հանրապետությունների մանկավարժական ինստիտուտների ուսանողական գիտական նստաշրջանին, կարդացել «Արևմտահայերի ազգային-ազատագրական շարժումը 1914–1916 թթ.» վերնագրով զեկուցում:

1966–1968 թթ. Կ. Հարությունյանն աշխատել է Հայաստանի նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվում որպես կրտսեր, ապա ավագ գիտաշխատող, ձեռք բերել արխիվային փաստաթղթերի հետ աշխատելու փորձ, «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսում տպագրել իր առաջին գիտական գործերը: 1968

թ. ընդունվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ասպիրանտուրա: 1971 թ. մինչ օրս աշխատում է նույն ինստիտուտում սկզբում որպես կրտսեր, ապա ավագ, առաջատար գիտաշխատող, 1994 թ. հունիսից «Հայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմներին» բաժնի վարիչ, այնուհետև՝ «Հայ զինվորական պատմությունը» թեմատիկ խմբի ղեկավար, 2015 թ.՝ գլխավոր գիտական աշխատող: 1979 թ. պաշտպանել է թեկնածուական, 1994-ին՝ դոկտորական ատենախոսություններ:

Կ. Հարությունյանի դոկտորական ատենախոսությունը՝ «Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թթ.», ըստ էության, հայկական զինուժի շինարարության ընդհանրացնող պատմությունն է վերոհիշյալ ժամանակաշրջանում: Ատենախոսությունը 2002 թ. երկու անգամ հրատարակվել է որպես մենագրություն և անմիջապես սպառվել: 272 էջից բաղկացած աշխատության մեջ նորահայտ արխիվային փաստերի հիման վրա, հայ պատմագրության մեջ առաջին անգամ լուսաբանվել է Հայկական զորամիավորումների 1918–1945 թթ. պատմությունը, վեր է հանվել Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետությունների բանակների ու վերջիններիս վերակազմավորման հետևանքով ստեղծված Հայկական հրաձգային դիվիզիայի ժառանգական կապը, բացահայտվել այդ զորամիավորումների կադրերի դերը Հայրենական մեծ պատերազմի տարիներին կազմավորված հայկական նոր դիվիզիաների կյանքում, նորովի ներկայացվել դրանց մարտական ուղիներն ու ճակատագրերը:

*Վաստակաշատ պատմաբանի հիմնակազմ աշխատություններից է նաև 2004 թ. ռուսերեն լեզվով լույս տեսած «Հայ ժողովրդի մասնակցությունը Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմին (1941–1945 թթ.)» ստվարածավալ մենագրությունը (866 էջ), որտեղ հայ պատմագրության մեջ առաջին անգամ բազմակողմանի լուսաբանվել է Մեծ հայրենականին հայ ժողովրդի մասնակցության հիմնահարցը: Ռուսաստանի պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվից (Մոսկվայի մարզ, ք. Պոդոլսկ), ՌԴ ՊՆ Ռազմածովային նավատորմի կենտրոնական արխիվից (Լենինգրադի մարզ, ք. Գատչինա), ՌԴ ռազմապատմական պետական կենտրոնական արխիվից (ք. Մոսկվա) և այլ արխիվներից հայտնաբերած նորահայտ վավերագրերի, համապատասխան գրականության ու մամուլի տվյալների հիման վրա հանգամանորեն բացահայտվել է հայ ռազմիկների կատարած դերը պատերազմի գլխավոր ճակատամարտերում տարած հաղթանակում, ցույց է տրվել թիկունքի աշխատողների հերոսական աշխատանքը, հայ պարտիզանների ու սփյուռքահայերի ներդրումը ֆաշիզմի ջախջախման գործում: Գրքի վերջում կան հավելվածներ, որտեղ տրվել են Խորհրդային Միության հայ հերոսների, մարշալների, գեներալների ու ծովակալների ճշգրտված ցուցակները: Ի դեպ, այս գրքի մասին Մոսկվայում լույս տեսնող «*Ветеран*» թերթի 2005 թ. -41-ում գրախոսական է տպագրվել, որտեղ բարձր է գնահատվել հեղինակի կատարած աշխատանքը, նշվել երիտասարդության ռազ-*

մահայրենասիրական դաստիարակության գործում դրա դերը: Վերոհիշյալ մենագրության համար Կ. Հարությունյանն արժանացել է ՌԴ ԳԱ նախագահության և Ռուսաստանի պատմության ինստիտուտի տնօրինության «Պատվավոր դիպլոմի» ու դրամական պարգևի:

Պատմագիտության դոկտորի գրչին են պատկանում նաև մարշալներ՝ Ի. Ք. Բաղրամյանի, Հ. Խ. Բաբաջանյանի, Ս. Ա. Խուդյակովի (Ա. Ա. Խանփերյանց) և Ս. Ք. Ազանովի մասին ռուսերեն գրված մենագրությունները: Եթե Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս Ի. Ք. Բաղրամյանի կյանքն ու գործունեությունը շատ թե քիչ ուսումնասիրված է եղել հայ պատմագրության մեջ և Կ. Հարությունյանն իր գիրքը լրացրել ու հարստացրել է նորահայտ արխիվային փաստերով, ապա մյուս երեք մարշալների մասին աշխատությունները նորություն են հայ պատմագրության մեջ: Առաջին անգամ Կ. Հարությունյանն է ուսումնասիրել ՌԴ անվտանգության ծառայության արխիվի ու Ռուսաստանի ռազմական կոլեգիայի գերագույն դատարանի «յոթ փակի տակ» պահված նյութերը և ուշագրավ աշխատություն ստեղծել ավիացիայի հայ մարշալ Ս. Ա. Խուդյակով– Ա. Ա. Խանփերյանցի մասին, որը լույս է տեսել երկու անգամ՝ 2006-ին և 2008-ին: Մեր պատմագրության մեջ նորություն էր նաև զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ, Խորհրդային Միության հերոս Հ. Խ. Բաբաջանյանի և ինժեներական զորքերի մարշալ Ս. Ք. Ազանովի մասին 2009-ին և 2012-ին հրատարակած գրքերը, որոնք հիմնականում շարադրված են ՌԴ ՊՆ կենտրոնական արխիվի և ՌԴ ՊՆ կադրերի գլխավոր վարչության տվյալների հիման վրա:

Նկատենք, որ Կ. Հարությունյանը 2001 թ. հրատարակել էր «Գրիգոր Արտեմի Հարությունյանի կյանքն ու գործունեությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941–1945)» մենագրությունը, հայ պատմագրության մեջ դարձյալ առաջին անգամ նորահայտ արխիվային փաստերի, մամուլի նյութերի ու ժամանակակիցների հուշերի հիման վրա լուսաբանել Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Արտեմի Հարությունյանի գործունեությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Հիշենք, որ մեծանուն բանաստեղծ և ակադեմիկոս Ավետիք Իսահակյանը նրան կնքել էր «Գրիգոր Շինարար» անունով՝ կատարած բեղմնավոր, հայրենանվեր աշխատանքի համար:

Կ. Հարությունյանի ուսումնասիրության ոլորտում հատուկ տեղ են գրավում՝ Ստալինգրադի, Լենինգրադի, Կուրսկի և Մոսկվայի ճակատամարտերին հայ ժողովրդի զավակների մասնակցության հիմնահարցերը, որոնք առանձին գրքերով լույս են տեսել ռուսերեն՝ 2007, 2011, 2014 և 2015 թվականներին:

Կ. Հարությունյանի տեսադաշտից չեն վրիպել նաև Հայրենական մեծ պատերազմին Արցախի և Ջավախքի հայության մասնակցության հարցերը: 2009 թ. արխիվային նորահայտ փաստերի հիման վրա ռուսերեն հրատարակել է «Լեռնային Ղարա-

*բաղի և Հյուսիսային Արցախի հայ ռազմիկների մասնակցությունը Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմին (1941–1945)» մենագրությունը (526 էջ): Այս գրքի մասին, ի դեպ, հանգամանալից գրախոսական է տպագրվել Մոսկվայում լույս տեղնող «*Ноев ковчег*» թերթի 2009 թ. ապրիլի 2-ի համարում: 2014 թ. Կ. Հարությունյանը հրատարակել է «Ջավախքահայերի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին» մենագրությունը (հայերեն, 283 էջ):*

Իր աշխատանքային գործունեության ընթացքում Կ. Հարությունյանը սերտ համագործակցում է նաև Ռուսաստանի ու Բելառուսի իր գործընկերների հետ: Արդյունքում 2010 թ. Մինսկում լույս է տեսել «Խորհրդային Միության հայ հերոսները Բելառուսի համար մղված մարտերում (1941–1944)» աշխատությունը (64 էջ)՝ Բելառուսի ԳԱԱ պատմության ինստիտուտի ռազմական պատմության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Մ. Լիտվինի համահեղինակությամբ: 2010 թ. Երևանում ռուսերեն լեզվով հրատարակված «Հայ ժողովրդի ավանդը Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում (1941–1945)» աշխատության (համահեղինակ Հ. Ռ. Պողոսյան, 875 էջ) առաջաբանը գրել է ՌԴ ԳԱ Ռուսաստանի պատմության ռազմական կենտրոնի վարիչ, ՌԴ ԳԱ ակադեմիկոս Գ. Ա. Կումանյովը: Մինչ այդ՝ 2009 թ., Սանկտ-Պետերբուրգում ռուսերեն լեզվով լույս էր տեսել «Հայերը Լենինգրադի համար մղված մարտերում» գրքույկը:

Կ. Հարությունյանն ուսումնասիրել է հայ պատմագրության տեսադաշտից դուրս մնացած մի թեմա ևս, որը վերաբերում է խորհրդա-ֆիննական պատերազմին հայերի մասնակցությանը: 2008 թ. նա հայերեն հրատարակել է «Հայ ռազմիկների մասնակցությունը խորհրդա-ֆիննական պատերազմին (30. 11. 1939 – 13. 03. 1940)» մենագրությունը (228 էջ), որտեղ ՌԴ ռազմապատմական արխիվների հարուստ նյութերի, համապատասխան մասնագիտական գրականության և մամուլի հիման վրա լուսաբանվել է Երկրորդ համաշխարհային պատերազմի բաղկացուցիչ մաս կազմող այդ իրադարձությանը հայ ռազմիկների մասնակցության հիմնահարցը: Գրքում հատուկ ուշադրություն է դարձվել պատերազմում Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացած, մարտական շքանշաններով ու մեդալներով պարգևատրված հայ հրամանատարների ու զինվորների (հրետանավորներ, օդաչուներ, տանկիստներ, բժիշկներ և այլն) կատարած սխրանքների վերհանմանը, Խորհրդային Հայաստանից այդ պատերազմի մասնակիցների ու զոհվածների թվերի ճշգրտմանը, նրանց անունների հրապարակմանը:

Մոտ կես դար աշխատելով Ռուսաստանի ռազմապատմական արխիվներում՝ Կ. Հարությունյանն զգալի ավանդ ունի արխիվային մի շարք փաստաթղթերի և նյութերի ժողովածուների կազմման գործում: Այսպես, 1976 թ. լույս է տեսել «Հայկական 76-րդ Կ. Ե. Վորոշիլովի անվան Կարմրադրոշ – 51-րդ գվարդիական Վիտեբսկյան Լենինի շքանշանակիր հրաձգային դիվիզիա 1920 – 1945 թթ.» (268 էջ), 1985-ին՝ «89-րդ -

Թամանյան Կարմրաղրոշ, Կուտուզովի 2-րդ աստիճանի, Կարմիր աստղի շքանշանակիր, Հայկական հրաձգային դիվիզիայի մարտական ուղին 1942–1945 թթ. (748 էջ), 1997-ին՝ «Մարշալ Բաղրամյան» (180 էջ) արխիվային փաստաթղթերի ու նյութերի ժողովածուները (կազմողներ՝ Ա. Հ. Հարությունյան, Կ. Ա. Հարությունյան, Օ. Ս. Բալիկյան, Է. Գ. Սարգսյան և ուրիշներ), որտեղ հիմնականում տեղ են գտել ՌԴ պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվից Կ. Հարությունյանի հայտնաբերած փաստաթղթերը:

Անվանի պատմաբանն ակտիվորեն մասնակցել է նաև Խորհրդային Հայաստանից Հայրենական մեծ պատերազմում զոհված հայերի անուններն ամփոփող «Հուշամատյան» քառահատորյակի խմբագրման ու առաջաբանների գրման աշխատանքներին, հեղինակ է «Հայկական ազգային ատլասում» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ատլասում» երկու քարտեզների, քարտեզներ, որոնք վերաբերում են Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի զավակների մասնակցությանը: Բացի այդ, Կ. Հարությունյանը գրել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կողմից 2010 թ. հրատարակած «Հայոց պատմության» 4-րդ հատորի 1-ին գրքի 9-րդ գլխի 6 ենթաբաժինները (էջ 539–578) և Երևանի պետական համալսարանի կողմից 2012 թ. հրատարակած «Հայոց պատմության» դասագրքի 2-րդ գլխի 5-րդ ենթաբաժինը (էջ 650–674):

Կ. Հարությունյանն անդրադարձել է նաև Հայաստանի երրորդ Հանրապետության զինված ուժերի պատմությանը: 2007 թ. հրատարակել է «Գեներալ-մայոր Վլադիմիր Ասատուրի Հայրապետյան» աշխատությունը (296 էջ), որտեղ լուսաբանել է ՀՀ զինված ուժերի հիմնադիրներից մեկի՝ ՀՀ ՊՆ հրթիռահրետանային զորքերի առաջին պետ (1992–2003), այժմ ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր բարձրագույն սպայական հանձնաժողովի նախագահ, գեներալ-մայոր Վ. Ա. Հայրապետյանի կենսագրությունը, ԽՍՀՄ, ապա ՀՀ զինված ուժերում նրա գործունեությունը, հրետանու գործի հմուտ մասնագետ հրամանատարի դերը Հայկական բանակի հրետանային և հրթիռային զորքերի կազմավորման ու մարտական կիրառման, հրետանային կադրերի պատրաստման բնագավառում:

Կ. Հարությունյանը պ. գ. դ. Մարատ Սահակյանի հետ 1988 թ. հրատարակել է «Նրանք մարտնչել են հանուն հայրենիքի» գիրքը, որտեղ առաջին անգամ լուսաբանվել են ՀԽՍՀ ԳԱ համակարգում աշխատող Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների մարտական սխրանքներն ու աշխատանքային գործունեությունը: Այդ գիրքը (որոշ լրացումներով) ռուսերեն լեզվով հրատարակվել է 2001-ին՝ «Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի աշխատակիցների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941–1945)» վերնագրով:

Ամբողջական չէր լինի Կ. Հարությունյանի գիտական կենսագրությունը, եթե չնշվեր, որ նա ընդհանուր առմամբ հրատարակել է 28 մենագրություն, համահեղի-

նակ է 14 գրքերի ու ժողովածուների, ավելի քան 120 գիտական և հրապարակախոսական հոդվածների, Խորհրդային Միության հայ հերոսների ու Փառքի շքանշանի լրիվ ասպետների պլակատների: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է 2 դոկտորական և 4 թեկնածուական, ընդդիմախոսությամբ՝ 5 ատենախոսություն: Կ. Հարությունյանը մասնակցել, զեկուցումներով հանդես է եկել Երևանում, Շուշիում, Մոսկվայում, Սանկտ Պետերբուրգում, Վոլգոգրադում, Մինսկում և մի շարք այլ քաղաքներում տեղի ունեցած միջազգային ու հանրապետական գիտագործնական գիտաժողովների: Երկար տարիներ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի, ՀՀ ՊՆ «Մայր Հայաստան» ռազմապատմական թանգարանի, Շուշիի «Կաճառ» գիտական կենտրոնի գիտական խորհուրդների և ՀՀ ՊՆ «Մարշալ Բաղրամյան» հայրենասիրական կազմակերպության նախագահության անդամ է: Ավելի քան 30 տարի եղել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արհկոմի նախագահ:

Գիտահետազոտական և գիտական կադրեր պատրաստելուն զուգընթաց Կ. Հարությունյանը տարիներ շարունակ զբաղվել է մանկավարժական աշխատանքով, մի շարք բուհերում ղեկավարել է ավարտական քննությունների պետական հանձնաժողովներ:

Գիտական հայրենանվեր աշխատանքի համար Կ. Հարությունյանը պարգևատրվել է «Մովսես Խորենացի», «Մարշալ Բաղրամյան», «Վազգեն Սարգսյան», «Գարեգին Նժդեհ» մեդալներով, ՀՀ ԳԱԱ «Գովեստագրով» և «Վաստակագրով», ՌԴ «Միխաիլ Շոլոխով», «Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 65-ամյակը», «Մարտական եղբայրություն», «Հունան Ավետիսյան», «366-րդ գվարդիական մոտոհրաձգային գունդ» և մի շարք այլ մեդալներով, ԱՊՀ երկրների վետերանների միության «Պատվո նշանով»:

Ինձ համար խորհրդանշական իմաստ ունի Կ. Հարությունյանի հոբելյանի մասին խոսք ասելը, քանզի, ինչպես տեսանք, նրա ողջ կենսագործունեությունն ուղղված է եղել Հայրենական մեծ պատերազմում հայ ժողովրդի մասնակցության պատմության լուսաբանմանը, պատերազմ, որին սկզբից մինչև վերջ տարբեր ռազմաճակատներում մասնակցել, քանիցս ծանր վիրավորվել է իմ հայրը՝ բժշկական ծառայության կապիտան Հազարապետ Գրիգորի Զաքարյանը: Բացի այդ, ես եղել եմ 1980 թ. հրատարակված Կ. Հարությունյանի առաջին՝ «51-րդ գվարդիական դիվիզիայի մարտական ուղին» մենագրության հրատարակչական խմբագիրը:

Սրտանց շնորհավորելով ավագ գործընկերոջս՝ նրան ցանկանում եմ գիտական նորանոր նվաճումներ, առողջություն և ամենայն բարիք:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ